

Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)

Պատմ. գիտ. դոկտոր

ԽԵԹԱԿԱՆ ԱՐՔԱ ՍՈՒՊԻԼՈՒԼԻՈՒՄԱԿ Ի-Ի ԿՆԻՔԻ

Եվ հայկական երկնային խորհրդանշանների ընդհանրությունները*

Բանալի բառեր - Սուպիլուլիումա, կնիք, Արևի աստված, Երկնքի աստված, Հայկ, Օրիոն, Շնիկ, Սիրիուս, խորհրդանշան, համաստեղություն, հազարամյակ:

Մուտք

Սուպիլուլիումա I-ը (մ. թ. ա. 1345-1322 թթ.) խեթական հզոր թագավորներից էր, Խեթական աշխարհակալության հիմնադիրը, Միտանիին վերջնական պարտության մատնողը, նրա արևմտյան մասում և Հյուսիսային Ասորիքում խեթերին ենթակա թագավորությունների ստեղծողը:

Այս թագավորի մեզ հասած կնքադրոշմը¹ (Նկ. 1) իր կենտրոնական խորհրդանշաններով տարբերվում է մյուս վեց խեթական արքաների հայտնի կնքադրոշմներից: Դրանցում, ի տարբերություն Սուպիլուլիումա I-ի կնքադրոշմի, բացակայում է Օրիոն համաստեղության ուրվագծային պատկերը²: Փոխադարձ կապի և ամբողջության մեջ դիտված Սուպիլուլիումայի կնիքի կենտրոնական խորհրդանշաններն իրենց զուգահեռ ձևերն ունեն տարբեր ժամանակաշրջաններում Հայկական լեռնաշխարհում ստեղծված պաշտամունքային նյութերում: Դրանց միջև ամկա նմանությունները հիմք են տալիս պարզելու նրանց հնդեվրոպական ակունքները և որոշակի դարձնելու Սուպիլուլիումա I-ի կնիքի խորհրդանշանների իմաստները:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 06.02.2020:

1 Տես *Ceram C. W.*, *Le secret des Hittites. Découverte d'un ancien Empire*, Paris, 1955, էջ 163, fig. 28:

2 Տես նույն տեղում, էջ 114, fig. 21, էջ 169, fig. 9: Տես նաև՝ *Герни О. Р.*, *Хетты*, М., 1987, էջ 179, рис. 11:



Նկ. 1

1. Կնիքի թռչնաթև արևի խորհրդանշանն ու դրա գուգահեռները

Մուսլիմայի լուսնայի կնիքի վերնամասում պատկերված թռչնաթև արևի սկավառակը արևի աստծո խորհրդանշանն է՝ իր տարբերակներով հայտնի նաև Մերձավոր Արևելքի մյուս երկրներից: Արևի աստծուն հիշատակող խեթական կրոնական տեքստերից մեկի առթիվ հայտնի խեթագետ Օ. Ռ. Գերնին գրում է. «Ինչո՞ւ է ասվում, որ արևի աստվածը ելնում է ծովից: Ենթադրվել է, որ այդ բառակապակցությունը հավանաբար մատնանշում է խեթական արևի աստծո ոչ տեղական, ոչ անատոլիական ծագումը, որ նա բերվել է այստեղ արևելյան ծովափին՝ ինչ-որ տեղ ապրած ժողովրդի կողմից: Իրականում հայտնի է հետաքրքիր մի մանրամասն. մի տեքստում արևի աստվածը նկարագրվում է ձկները գլխին, և գոյություն ունեւ Արևի աստծո առանձին տեսակը՝ հայտնի որպես «ջրի արև աստված»³: Անկասկած, «արևելյան ծովափից» այս Արևի աստծուն Փոքր Ասիա հասցրած մարդիկ եղել են Հայկական լեռնաշխարհի բնակիչները, որը գտնվում է Փոքր Ասիայից արևելք՝ նրա և Կասպից ծովի միջև: Վ. Վ. Իվանովը կարծում է, որ այդ ծովը կարող էր լինել կամ Կասպից ծովը, կամ Ուրմիա ու Վանա լճերից որևէ մեկը⁴: Վերջինն ավելի հավանական է խեթերի երկրին (Փոքր Ասիայում) ավելի մոտ լինելու առումով:

Վանա լճի արևելյան ափին էր գտնվում Հայկական լեռնաշխարհի արևապաշտության ամենանշանավոր կենտրոնը՝ Վանը (Տոսպա, Խշբա): Այստեղ պաշտված արևի աստվածը նույնպես կարող էր պատկերացվել «ձկները գլխին», որովհետև հյուսիս-արևելքից Վանա լիճ թափվող Բերկրի գետը «Վանա ծովու ամենեն նշանավոր գետն է այս՝ յուր ջրոյն և ձկանց առատությամբ»⁵, իսկ դրա

3 Герни О. Р., նշվ. աշխ., էջ 125: Ուշադրություն դարձնենք, որ խեթական թագավոր Մուվատալին (մ. թ. ա. 1315-1296 թթ.) արևի աստծուն սկսում էր աղոթել հետևյալ բառերով. «Երկնային արևի աստված, իմ տեր, մարդկության հովիվ: Դու ելնում ես արևի աստված ծովից և բարձրանում երկինք: Ո՛վ երկնային արևի աստված, իմ տեր, ամեն օր դու դատաստանի ես ենթարկում մարդուն, շանը, խոզին և վայրի գազաններին» (Герни О. Р., նշվ. աշխ., էջ 125):

4 Стів Гамкрелидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. II, էջ 896: Խեթերեն *aruna* բառով նշվում էին թե՛ ծովը և թե՛ լիճը (տե՛ս նույն տեղում, էջ 672):

5 Մրվանձոյանց Պ., Երկեր, հատ. I, Եր., 1978, էջ 398:

ՎԷՐ ՀԱՄԱՆԻՄԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՒՄ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 1 (69), ԽՈՒՆՎԱՐ-ՄԱՐԿ, 2020

գետաբերանին էր գտնվում Հին Հայաստանի արքունի ձկնորսարանը («ձկնատենիքն Առեստեայ»)՝: Հենց այստեղ է հայտնաբերվել Մենուա թագավորի (մ. թ. ա. 810-786 թթ.) կողմից արևի աստված Շիվինիին ձոնված կոթողը⁷: Ամենայն հավանականությամբ, այստեղ Շիվինին պատկերացվել է խեթական «ջրի արև աստծո» նման «ձկները գլխին»: Հավանաբար, այս տեսանկյունից պետք է դիտարկել նաև «արեգակ» պատասխանն ակնկալող վանեցիների «Մեյ խավք մը կա իլանի (ավետաբեր), / Բարձրակտուց սիլանի (փայլուն), / Կուտ կուտե երկրի, / Կերթա թառի Բերկրի»⁸ հանելուկի և Բերկրի գետի՝ ուշ շրջանի **Բենդիմահի/Բանդիմահի** անվան կապը: Վերջինը պարսկերեն բառ է՝ «ձկան ամբարտակ» նշանակությամբ:

Սուպիլուլիումա I-ը բոլոր միահեծան հին թագավորների նման ձգտում էր իր հպատակներին ներշնչելու, որ իր իշխանությունը երկնառաք է, սրբազան, և ինքն իշխանություն ունի ինչպես լույս-արևային, այնպես էլ ջուր-անձրևային երևույթների վրա: Ըստ այդմ էլ նա կրել է **Սուպիլուլիումա** անունը, որը, ըստ երևույթին, անձնանունն չէ, այլ գահանուն: Այս անվան գաղտնագրված իմաստը, մեր կարծիքով, անխզելի կապի մեջ է ծովածին արևի մասին եղած հին պատկերացումների հետ: Անանիա Շիրակացու հարցումներից մեկում ասվում է. «Չի՞նչ է՝ որ ի գիշերի ընդ երկրաւ դառնայ արեգակն», պատասխանն է. «Այս ի նուագութենէ ծովու է յայտնի...՝ զի իջանելով նաԲ ի ջուրն լափեսցէ ի նոցանէն ջեռուցանելովն, գոր սասցին բնաբանքն»⁹: Ավելի մանրամասն հարցին պատասխանում է Արեգակն ինքը. «...Յորժամ կատարեմ զգիշերային ընթացս իմ ի ստուերէ երկրիս յարեւմտից յարեւելս, եւ ի բերին իմ ի վեր զբազմութիւն ջուրց ցանեմ զաշխարհաւ՝ գոր եւ դուք ցօղ անուանեք»¹⁰:

Այժմ արև-ծով-ջուր-ցող կապը փորձենք փնտրել նաև **Սուպիլուլիումա** (𐎎𐎗𐎛𐎠-𐎠𐎢-𐎢-𐎢-𐎢-𐎠-𐎢) անվան մեջ: Անունը կազմված է *supi-*, *-lul(i)-* և *-um(a)* բաղադրիչներով, որոնցից վերջինն անվանակերտ վերջածանց է՝ առկա նաև *Šarruma* դիցանվան մեջ¹¹: Բաղադրիչներից առաջինը խեթերեն **supi-**(**šū-up-pi-**) բառն է՝ «մաքուր, սուրբ», որը ծագում է *h.-ե. *keu* «լուսավորել» արմատի **ku* տարբերակից *-bh* անականով¹²: Հմմտ. հին հնդկ. *śubhō* «գեղեցիկ, հանելի», *śubhro* «գեղեցիկ, փայլուն», «պայծառ, մաքուր», հայ. սուրբ < *սուրբ < *h.-ե. *kubhro-*¹³: Բերված բառերի՝ *h.-ե. *ku-* «փայլել, լուսավորել» նախնական արմատից ծագած լինելու հանգամանքը հուշում է, որ հնդեվրոպական միասնությ-

6 Փաստոսի Քիզանդացու Պատմություն Հայոց, Եր., 1987, գիրք Գ, գլուխ Ը, գիրք Դ, գլուխ խբ:

7 Տե՛ս Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960, надп. N 95:

8 Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 4:

9 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն եւ տոմար, Եր., 1940, էջ 84:

10 Նույն տեղում, էջ 59-60:

11 Տե՛ս Герни О. Р., -նշվ. աշխ., էջ 122, 126, 127: Հմմտ. հայերեն **-ոմ** և **-ում** վերջածանցները **թռոմ**, **ճոռոմ**, **շողոմ**, **ծծոմ**, **տրտում** բառերում:

12 Տե՛ս Джаукян Г., Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ер., 1967, էջ 8, 144: Տե՛ս նաև: **Ջահուկյան Գ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 110, 146:

13 Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. IV, Եր., 1979, էջ 256:

յան ժամանակաշրջանում այն կարող էր լինել արևի աստծո մակդիրը՝ «փայլուն» > «մաքուր» > «սուրբ» իմաստներով: Չէ՞ որ արեգակը «է՛ տարր սեղմ, խիստ, մաքուր, գնդաձև, բոլոր ամենևին, անդեզն (պետք է լինի՝ անգեզն - Ս. Պ.) եւ անսպի»¹⁴:

Supi-, lul(i)-, -um(a) բաղադրիչներով կազմված անվան -lul(i)- բաղադրիչի լույ- արտասանության մասին են վկայում այս անվան ուշխեթական ձևերի ասորեստանյան տառադարձումները՝ Սապալույմե և Ուշպիլույումե¹⁵: Այդ անվան նախնական ընդարձակ իմաստի բացահայտմանը կարելի է հասնել համապատասխան արմատի միջոցով: Հայերենում լույ արմատից ունենք լույայ (<լույ-այ) և լույախ (<լույ-ախ) բառերը՝ կազմված -այ և -ախ վերջածանցներով: Սրանք նշանակում են «անձրևախառն ձյուն, կարկտախառն անձրև»¹⁶: Այս նույն արմատն է լլվել «կոնծել, հարբել» բառում և լույ խմել, լույ քցել, «սաստիկ հարբել» բառակապակցություններում¹⁷: Հայերենում *լույ արմատը ծագել է կամ հ.-ե. *րև- նախաձևից -l անականով, կամ *lul- արմատի *lul- տարբերակից¹⁸. հմմտ. լուանալ «վանալ, ջրով մաքրել» և լատին. pluo «անձրևել», հին հնդկ. plōti «հեղեղում», հուն. πλύμα «վեղտոտ ջուր», հին իսլ. flaumr «հեղեղ» և այլն¹⁹: Արմատի *լու տարբերակից են ծագում լուո «վացում, լողանալը», լուլի «թրջված, տզկած», «սաստիկ հարբած», լուլկնալ «թրջվել, հարբել» բառերը²⁰:

Սուպիլուլիումա I-ը արևի թևավոր սկավառակը դրել էր իր կնիքի վերնամասում, որովհետև նրա օրոք արևի պաշտամունքը լայնորեն տարածված էր խեթական Փոքր Ասիայում: Այստեղ միայն մեկ արևի աստված չէ, որ պաշտամունքի առարկա էր²¹, բայց առաջնային պաշտամունքի էին արժանացել Արիննա քաղաքի տեղական արևի դիցուհին և վերոհիշյալ ծովածին արևի աստվածը: Վերջինի պաշտամունքի ոլորտի աստիճանական ընդարձակման մասին է խոսում այն փաստը, որ, Մուրսիի II-ից՝ Սուպիլուլիումա I-ի որդուց սկսած, խեթ թագավորներն իրենց անձը նշելիս գործածում էին ոչ թե դեռևս հինխեթական դարաշրջանի թագավորներից եկած «tabarna» կամ «ես՝ արքաս» տիտղոսները, այլ իրենք իրենց կոչում էին «^DUTU^{SI}» /«արևս», այսինքն՝ «Ես՝ արևս»²²: Օ. Ռ. Գերնիի կարծիքով՝ խեթ թագավորների այս նոր տիտղոսն արքայական

14 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտության եւ տոմար, էջ 47:

15 Տեսu Ceram C. W., նշվ. աշխ., էջ 67: Տեսu ևս. Քոյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր., 1999, էջ 218, ծան. 49:

16 Մայխայանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հատ. II, Եր., 1944, էջ 211:

17 Տեսu ՀԲԲ, հատ. II, էջ 211:

18 Տեսu Զահուկյան Չ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 134, 135, 276:

19 ՀԱԲ, հատ. II, Եր., 1973, էջ 300:

20 ՀԲԲ, հատ. II, էջ 201:

21 Գերնու Օ. Ք., նշվ. աշխ., էջ 125:

22 Նույն տեղում, էջ 60: Հին խեթական «tabarna» տիտղոսի նախնական իմաստը կարող ենք տեսնել հայերեն բարբառային տոբոլ և դոբոլ «նոխազ, առաջնորդ այծ» բառերում (տե՛ս, օրինակ, «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. VIII, Եր., 1977, էջ 488-489, 879): Նախնադարում նոխազը համարվում էր Հայկական լեռնաշխարհի ցեղերից շատերի տոտեն կենդանին, նրանց ցեղապետ-առաջնորդների խորհրդանիշը, ուստի նույնիմաստ քոջ բառը նաև «իշխանավոր, աղա» էր նշանակում (ՀԱԲ, հատ. IV, էջ 605): Նույնիսկ առած ունեինք. «Ան գեղն որ աղա չի կենա, կեչիին (այծ) աղա կը կանչին» (Ղանալանյան Ա., Առածանի, Եր., 1960, էջ 239):

խորհրդանիշ արևի թևավոր սկավառակի հետ նրանք փոխառել էին Միտանիից և Եգիպտոսից²³:

Վանա լճից հյուսիս-արևելք ընկած տարածքը՝ ներառյալ Առեստի արքունի ձկնորսարանը, ասորեստանյան սեպագրերից հայտնի էր **Արամալի** և **Արմարի-լի/Արմարիյալի** անուններով²⁴: Դրանցից առաջինը, ըստ Ն. Ադոնցի, ծագում է Ուրարտուի առաջին թագավոր Արամեի (Արամու) անունից և եղել է արքունի տիրույթ²⁵: Որ սա եղել է ոչ միայն Արամեի, այլև Ուրարտուի հաջորդ թագավորների ժառանգական տիրույթը, վկայում է Ասորեստանի Սարգոն II թագավորը: Մ. թ. ա. 713 թ. Ուրարտուի Արմարիլի նահանգ ներխուժած Սարգոնը պատմում է հետևյալը. «Շարժվելով դեպի Արբու՝ Ուրասայի (իմա՞հ Ռուսայի - Ս. Պ.) հայրական տուն, և [դեպի] Բիար՝ Իշտարդուրիի (իմա՞ Սարդուրիի - Ս. Պ.) քաղաքները գնացի, դրանց շրջակայքի յոթ բնակավայրերը, որտեղ բնակվում էին նրա եղբայրները, նրա թագավորական սերմը, [և որտեղ] պաշտպանությունը ուժեղ էր, այդ քաղաքները ավերեցի, հողին հավասարեցրի...»²⁶: Սարդուրի II-ի, Ռուսա I-ի և նրանց քաղաքների մասին Ն. Ադոնցը գրում է, որ դրանք եղել են «դինաստիայի» քաղաքներ և ավելացնում. «Հետաքրքրական է նշել, որ հայ Արշակունիների ժամանակ ևս այն շրջանը, ուր գտնվում էին Արբուն և Ռիարը՝ Բերկրիի մարզը Արճեշում, հասկացված էին թագավորական տան իշխանների (իմա՞ արքայազունների - Ս. Պ.) բնակության համար»²⁷:

Այս տարածքում գոյություն ուներ Սուպիլուլիումա I-ի կնիքի թևավոր արևը հիշեցնող մի խորհրդանշան: Այն կարելի է տեսնել Բուդիսի մասնավոր հավաքածուի (Ժնև) ուրարտական բրոնզե ընծայական թիթեղին (մոտ 9 x 10 սմ): Արևի խորհրդանշանը զետեղված է դրա վերնամասում (Նկ. 2)²⁸ և մեհենագրերից ամենամեծն է: Թիթեղի ձախ կողմում պատկերված է գահին բազմած մի աստված, որի գահի հենարանը հայկական առասպելների միաեղջյուր եզն է, իսկ նրա դիմաց, ադորքի համար ձեռքերը վերև պարզած, հերթակա-նությամբ կանգնած են ամպրոպի աստվածը, մայր դիցուհին, մանուկ Մենու-ան (հավանաբար որպես թագաժառանգ) և Իշպուլինի արքան՝ Մենուայի հայ-

23 Տե՛ս նույն տեղում:

24 Տե՛ս **Дьяконов И. М.**, Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետև՝ **АВИИУ**), «Вестник древней истории», 1951, N 2, 3, 4, надп. N 27, 49, 50: Տե՛ս նաև՝ **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն. Ավանքները. 10-6-րդ դդ. մ. թ. ա., Եր., 1972, էջ 111, 211: Տե՛ս նաև՝ **Дьяконов И. М.**, Предыстория армянского народа. Армянское нагорье с 1500-500 гг. до н. э., Ер., 1968, էջ 153:

25 Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 354: Որ **Armanili** երկրանունը շատ ավելի հնուց է գալիս, պարզվում է հետևյալից: Հին խեթական թագավորներից Խաթուսիլի I-ը (մ. թ. ա. 1620-1590 թթ.) իր տարեգրության մեջ պարծենում է, թե անցել է Եփրատ գետը, «որպես առյուծ ոտնաստակ է տվել Խասուվա երկիրը» և հափշտակել նաև Արմարուքի ամպրոպի աստծո պատկերը (տե՛ս «Хрестоматия по истории древнего Востока», М., 1980, т. I, էջ 264): Arm-ar-uk երկրանունը նույն հիմքն ունի, ինչ և Arm-ar-ili-ն:

26 **АВИИУ**, N 49, «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հնագույն ժամանակներից մինչև 9-րդ դարի կեսերը», հատ. I, Եր., 1981, էջ 31-32:

27 **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 193-194:

28 Տե՛ս **Barnett R. D.**, The hieroglyphic Writing of Urartu, "Anatolian Studies presented to H. G. Güterbock", Istanbul, 1974, էջ 44: Տե՛ս նաև՝ **Սովսիսյան Ա.**, Հայկական մեհենագրություն, Եր., 2003, էջ 69, նկ. 36:

րը²⁹: Որ գահին բազմածն արևի աստվածն է, ցույց են տալիս նաև նրա թագի խորհրդանշանները: Դրանցից մեծ օղակը խորհրդանշում է արևը, իսկ նրան կից երկու փոքրերը՝ Արևի ուղեկից Արուսյակ (Վեներա) մոլորակն իր երկու երևումների մեջ՝ որպես լուսաբեր արևածագից առաջ արևելքում և որպես գիշերավար մայրամուտից հետո արևմուտքում:



Նկ. 2

Արևի թևավոր սկավառակ խորհրդանիշին նախորդած արևի և արևատար հսկա թռչունի միասնական (բայց դեռևս ոչ միաձույլ) պատկերը տեսնում ենք վաղ շրջանի մեր ժայռապատկերներից մեկում³⁰, որտեղ հսկա, երկարակտուց թռչունը՝ հավանաբար արագիլը, գրկի մեջ է պահում արևի սկավառակը: Ավելի ուշ մերձավորարևելյան հասարակություններում արևապաշտ միապետների միահեծան դիրքերի ամրապնդումով պետական պաշտամունքներում արևաբեր թռչնի դերում արագիլին փոխարինեցին գիշատիչ թռչունները, որոնք ոչ միայն բարձրաթռիչ էին, ինչպես, օրինակ, արծիվները, այլև սրընթաց, սրատես և ուժեղ: Ըստ այդմ՝ արևի խորհրդանիշ արևաբեր թռչնի և արևի սկավառակի պատկերները դարձան միաձույլ:

2. Կնիքի խորհրդանշանն ու դրա գուլգահեռները

Արևի թևավոր սկավառակից ներքև պատկերված Մուսիլուլիումա I-ի կնիքի խորհրդանշանի սուրբանկյուն և կորավուն տարբերակներին հաճախ կանգնած դիրքով հանդիպում ենք հայկական նյութերում՝ սկսած ամենահին ժայռապատկերներից մինչև միջնադարյան «Նշանագիրք իմաստնոց»-ներ: Սա Հայկ աստծո խորհրդանշանն է՝ Օրիոն համաստեղության պայծառ աստղերի մտացի ուրվագ-

29 Տե՛ս Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 33-38:

30 Նկարը տե՛ս Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձաններ», 6, Եր., 1971, աղ. 290: Տե՛ս նաև՝ Պետրոսյան Ս., Պատմությունն ու առասպելը Սինան թագավորի վիպական կերպարում, «Վեմ» համահայկական հանդես, 2016, N 1, էջ 23, նկ. 1:

ծային միացման պատկերը³¹: Այս համաստեղության՝ **Հայկի** անունով կոչվելու փաստն արձանագրված է դեռևս «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ (Յոր. ԼԸ, 31 և Եսայ. ԺԳ, 10): Միջնադարյան «Նշանագիրք իմաստնոց»-ները, այդ նույն նշանը ներկայացնելով կանգնած դիրքով, դրան տալիս են «փայլակն», իսկ դրա կորավուն տարբերակին՝ «մարդ» բացատրությունը (**փայլակն** բառը վերաբերում է ինչպես կայծակին, այնպես էլ ցերեկային լույսին և մարդուն³²): Հ. Մարտիրոսյանն այս տարբերակին տալիս է «մարդ-նախնի» իմաստը³³: Հայությունն իր առաջին «մարդ-նախնի» համարում էր Հայկին՝ «նախնի Հայաստանեայց. եւ այս ազգք նորա եւ ծնունդք եւ աշխարհ բնակութեան նոցա»³⁴:

Մ. թ. ա. II հազարամյակի առաջին քառորդով թվագրվող Կարմիր բերդի (նախկին Թագաքենդը Բանաքեռի մոտ) դամբարանադաշտից հայտնաբերված խեցեգործության նմուշների վրա տեսնում ենք Հայկի խորհրդանշանը՝ «խաչաձև վող ուղիղներով գույգ եռանկյունիներ կազմող զարդանախշը»³⁵, որը կրկնվում է Հառիճի³⁶ և Մեծամորի³⁷ մ. թ. ա. XX-XVIII դարերի նյութերում³⁸: Վերջիններից մեկում այդ խորհրդանշանները հիշեցնում են «գազաթներով իրար հանդիպող եռանկյունիներ»³⁹: Հայկի խորհրդանշանի մեկ ուրիշ տարբերակ՝ մի մասով կարծես եռանկյունաձև, մյուսով կորավուն, գտնվում է Մեծամորի ժայռակերտ պաշտամունքային կառույցների VII խմբում⁴⁰, իսկ 8-աձև տեսքով հայտնաբերվել է նաև ժայռագրություններում և ավելի ուշ ժամանակներով թվագրվող մի ձիատեսք կողպեքի վրա⁴¹:

Աղեղնավոր նախնադարյան որսորդ և տոհմի առաջնորդ Հայկի կերպարից գերագույն աստծո կերպարի կերտումը հազարամյակներ տևած մտավոր գործունեության արդյունք է եղել: Գործընթացի կարևոր օղակների ականատեսն ենք Գեղամա լեռների ներքոբերյալ ժայռապատկերում՝ հանձինս նրա արական աստվածության (Նկ. 3ա)⁴² և պատմական Գարդման գավառի մ. թ. ա. II հազարամյակի խեցեղեն անոթի պատկերի «նետագլուխ» աստծո (Նկ. 3բ)⁴³: Անկաս-

31 Տես **Պետրոսյան Ս.**, Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 7-8:

32 Տես **Աճառյան Հ.**, Հայոց գրերը. Ցուցակ հայկական հին նշանագրերի, Եր., 1984, թիվ 280, 432: Տես նաև՝ **Աբրահամյան Ա.**, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 240, 242: «Նոր բառգիրք հայկազգես լեզուի», հատ. II, Եր., 1981, էջ 928: Տես նաև՝ «Բառգիրք հայոց», Քննական քննադիրը, առաջաբանը և ծանոթագրությունները **Հ. Ամայանի**, Եր., 1975, էջ 323:

33 Տես **Մարտիրոսյան Հ.**, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Եր., 1973, էջ 57:

34 **Մովսիսի խորենացու** Պատմութիւն Հայոց, Եր., 1981, գիրք Ա, գլուխ Ժբ:

35 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, էջ 158, 160, 164:

36 Տես **Եսայան Ս.**, Հայաստանի հնագիտություն, Եր., 1992, էջ 174 և էջ 171, աղ. 35, էջ 175, աղ. 37:

37 Տես **Խանգաղյան Է.**, Նյութական արտադրության մնացորդներ, շերտագրական դիտողություններ և թվագրության հարցեր, «Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների տվյալներով)», Եր., 1973, էջ 23, նկ. 22, էջ 62, նկ. 87:

38 Տես նույն տեղում, էջ 23:

39 Նույն տեղում, էջ 124-125, նկ. 122:

40 Տես **Ակրոսյան Կ.**, ժայռակերտ կառուցվածքներ և ժայռագրեր, «Մեծամոր», 1973, էջ 160 և էջ 159 նկ. 157:

41 Տես **Խանգաղյան Է.**, նշվ. աշխ., էջ 60, նկ. 82:

42 Տես **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, նկ. 309:

43 Տես **Карахмедова А. А.**, Хурритские печати из Мингечаура, «Культурные связи народов Средней Азии и Кавказа. Древность и Средневековье», М., 1990, էջ 140: Ըստ այս հնագետի՝ Գարդմանի Խանդար հնավայրից հայտնաբերված անանը՝ «թևավոր նետածիգի» պատկերով, թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի վերջով (էջ 139-142):

կաձ, առաջինում պատկերված արական աստվածությունը գերագույն աստված է, որովհետև գույգ է կազմում իրենից աջ պատկերված դիցուհու հետ: Իսկ որ սա մայր դիցուհին է, ցույց են տալիս նրա «ծառակերպ» մարմինը և մահիկաձև թագը՝ մայր դիցուհիների խորհրդանիշները՝ որպես բուսաշխարհի հովանավորի և լուսնի դիցուհու⁴⁴: Երկու դեպքում էլ գերագույն աստվածը որպես մարմին ունի Հայկի խորհրդանշանը՝ Հայկի համաստեղության ուրվագծային պատկերը, և որտորդ աստծուց ժառանգած «նետաձև գլուխը»: Վերջին դեպքում պետք է հիշել ոչ միայն Հայկին բնութագրող «կորովաձիգ եւ հաստադեղն», «ադեղնավոր» բառերը⁴⁵, այլև այն հանգամանքը, որ նախնադարի առասպելաբանական մտածողությամբ նետը համադրվում էր արևի ճառագայթի հետ, իսկ նետաձիգ որտորը՝ արևի աստծո: Այդպես էր հույների Ապոլոնի՝ արևային լույսի անձնավորում աստծո դեպքում: Այդպես էր լինելու նաև մեր նախնի աստված «քաջագանգուր» և «խայտակն» Հայկի դեպքում⁴⁶:



Նկ. 3ա



Նկ. 3բ

Ուշադրության է արժանի նաև հետևյալ հանգամանքը: Գեղամա լեռների քննարկվող ժայռապատկերին Հայկը հենց որպես գերագույն աստված է պատկերված, որովհետև աջ ձեռքին ունի արևը խորհրդանշող խաչ⁴⁷, իսկ ձախ ձեռքին՝ ամպրոպը (կայծակը) խորհրդանշող բումերանգ⁴⁸: Իսկ դա նշանակում է, որ նա իր աստվածային անձի մեջ միավորել է արևի և ամպրոպի աստվածների

44 Հայկի՝ որպես գերագույն աստծո Σ խորհրդանշանը տեսնում ենք նաև վաղուձերական պատկերագիր արձանագրություններից մեկում՝ «աստվածություն» նշանակող աստղանշանի և կին նշանակող ∇ գաղափարագրի կողքին (Տե՛ս **Mallowan M. E.**, L'aurore de la Mésopotamie et de l'Iran, Paris-Bruxelles, 1966, էջ 65 fig. 51, 53): Այս դեպքում ևս իրենց խորհրդանշաններով հանդես եկած աստվածությունները գերագույն աստվածը և մայր դիցուհին են:

45 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, ք, Ա, ժա:

46 Տե՛ս նույն տեղում, Ա, ժա:

47 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայոց մեծնագրության ակունքներում, էջ 9, 69: Խաչի և արևի համադրման մասին են վկայում նաև հայ ժողովրդական հանելուկները: Դրանցից մեկում ասվում է «Մեծ **խաչ** ու պզտիկ խորան, /Ոչ սյուն ունի, ոչ գերան» (երկինք, արև, լուսին), մեկ ուրիշում «Հատն էլավ, հատն իջավ, էրկեն **խաչն** էրդքից իջավ» (արևի շողք) (**Հարությունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 5, 7):

48 Այս տեսանկյունից ուշագրավ է պարսիկ բանաստեղծ Նիզամի Գյանջեվիի «Էսթյանդար-նամե» պոեմում Ալեքսանդր (Էսթյանդար) Մակեդոնացու առասպելաբանված կերպարը: Նա իր մասին ասում է. «Ես պատկերն եմ **ամպի** և **արևի**, մի ձեռքիս հուր ունեմ, մյուսում՝ ջուր» (**Март С. М.**, Мохаррам, «Традиционная культура народов Передней и Средней Азии», JL, 1970, с. 359, pp. 183):

գործառույթները⁴⁹ այդպիսով հանդես գալով որպես երկնքի ամենակալ աստված: Ըստ այդմ՝ բնական է, որ Հայկ աստծո խորհրդանշանը «Նշանագիրք իմաստնոց»-ներից մեկում կանգնած դիրքով ներկայացված է «ադանդ» բացատրությամբ⁵⁰: **Ադանդ** բառը, «մոլար հաւատք կամ վարդապետութիւն» նշանակությունից բացի, ունի նաև «ճշմարիտ վարդապետութիւն» նշանակությունը⁵¹ (հավանաբար ավելի հին), որը և կարելի է վերագրել այդ նշանին՝ նկատի առնելով Հայկի պաշտամունքը և Հայկի համաստեղության (նաև Հայկի խորհրդանշանի) ուրվագծային պատկերը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Հայկի գրույցի սկզբնական հիմքը «ծագած է ընդհանուր առասպելաբանական աշխարհայեցողությունից... Հայոց նախնին՝ դիցազն Հայկը դարձել է առասպելաբանական աղեղնավորը կամ, որ մինևույն է, հայոց պաշտելի նախնին նույնացել է աստված աղեղնավորի հետ»⁵²: Այսպիսով, պետք է ընդունել, որ Հայկի նախնական կերպարը ձևավորվել է ոչ թե մեկ, այլ երկու նախատիպերի ձուլման հետևանքով: Դրանցից մեկը աղեղնավոր աստվածն է, մյուսը՝ իրականում գոյություն ունեցած համայնքի որսորդ առաջնորդների հավաքական կերպարը: Վերջինս ձևավորվել էր դեռևս Սառցապատման դարաշրջանում՝ ոչ ուշ, քան մ. թ. ա. X հազարամյակում, որովհետև «Հայկ և Բել» ավանդագրույցում Հայկի բնակության վայրը Հայկական լեռնաշխարհում բնութագրվում է «ի մեջ ցրտութեան սառնամանեացե բառերով, իսկ նրա աղխը (տոհմը) «հանդերձ որդուվք իւրուվք եւ դստերօք եւ որդւոց որդւուվք, արամբք զօրաւորօք, թուով իբրեւ երեքհարիւր» էր⁵³:

Հայկի կերպարն ունեցել է մեկ ուրիշ պատմական, բայց արդեն անձնավորված նախատիպ, որը գալիս է Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կառույցների ձևավորման ժամանակաշրջանից՝ Կուր-Արաքսյան (Շենգավիթյան) մշակույթի դարաշրջանից: Մ. թ. ա. III հազարամյակի կեսերին է վերագրվել վաղուց նկատված այն փաստը, որով Հայկի և Բելի մենամարտը համարվել է երկու հակառակորդ էթնոսների՝ հայկականի և սեմականի պայքարի արտացոլում⁵⁴: Եվ իսկապես, մ. թ. ա. III հազարամյակի կեսերից սկսած, Հայկական լեռնաշխարհի հարավում բնակվող ցեղերն իրենց անկախության պահպանման համար ստիպված են եղել ծանր պայքար մղել Հարավային Միջագետքի (հետագա Բաբելոնի)՝ սեմական էթնոսը ներկայացնող բռնակալների դեմ: Դրանցից ամենահայտնին եղել է Սարգոն Աքքադացին՝ Բելի հավանական նախատիպը: Հայկի՝

49 Հնդեվրոպական վաղ հանրության այս երկու առաջատար աստվածությունների գործառույթների վերաբերյալ տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., հատ. II, էջ 793-794: Տե՛ս նաև՝ **Պետրոսյան Ա., Պետրոսյան Շ.**, Հնագույն Շուքի դիցական գլխավոր եռյակը, «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատություններ», Գյումրի, 2001, էջ 88-89, 93, նկ. 3:

50 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 231:

51 Տե՛ս «Նոր բառգիրք հայկազգեան լեզուի», հատ. I, Եր., 1979, էջ 33: ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 120:

52 **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. I, Եր., 1966, էջ 44:

53 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, ժա:

54 Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. I, էջ 44: **Մելիք-Օհանջանյան Կ.**, Միթրա-Միհրի արբանյակներն ու գործակալները, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք I, Մանուկ Աբեղյանի հիշատակին, Եր., 1946, էջ 322:

որպես Բելին հաղթողի պատմական նախատիպը կարող էր լինել հարավի հայկական ցեղապետերից մեկը: Ինչպես Բելն էր կրում իր գերագույն աստծո **Բել** («տեր») անունը՝ համարվելով նրա երկրային փոխանորդն ու անձնավորումը (հմմտ. «Բելն Տիտանեան, ճոխն չաստվածացեալ», «կանգնեաց զպատկերն իւր, եւ ետ երկիր պագանել իբրև աստծոյ և զոհս մատուցանել», «գաստուածակարծեալ հսկայն»⁵⁵), այնպես էլ հայ ցեղի առաջնորդ ցեղապետ-արքան էր կրում իր գերագույն աստված և առաջին նախնի Հայկի անունը՝ որպես նրա փոխանորդ և արյունակից անձնավորող⁵⁶ (հմմտ. Հայկի սերունդներից համարվող մեր նահապետներից մեկի **Հայկակ** կամ **միւս Հայկ** անունը, որի հակառակորդն էլ **Բելոքոս** էր կոչվում)⁵⁷:

Հայկի պատմական նախատիպի՝ մ. թ. ա. III հազարամյակի կեսերին ապրած լինելու և Բելի դեմ տարած հաղթանակի իրական-պատմական հենքի մասին են վկայում հետևյալ հանգամանքները. 1. Այդ հաղթանակն ավանդաբար թվագրվում է մ. թ. ա. 2492 թվականով⁵⁸: 2. Հայկի նետը բրոնզե ծայրակալ ունենալու դեպքում միայն կարող էր ծակել Բելի պղնձե լանջապանակը⁵⁹: Այդ ժամանակաշրջանի Միջագետքում գերիշխում էր պղինձը, որից և պատրաստված էին զինվորի մարմինը պաշտպանող, նրա թաղիքե հագուստին ամրացված վահանակները⁶⁰ (իսկ Հայկական լեռնաշխարհում գերիշխում էր բրոնզը (Բրոնզի դար)): 3. Բելը զինված էր երկար նիզակով, որը ձեռքում պահվող կամ մոտիկ նետումով խոցող զենք էր, իսկ Հայկի զենքը նետ ու աղեղն էր: Շատ էին տարբեր անգամ նետվող կարճ նիզակի և նետի հեռահարության հնարավորությունները (կարճ նիզակինը՝ 30-40 մետր, աղեղից արձակված նետինը՝ 80-100 մետր)⁶¹: 4. Հայկի «երեքթևեան» կոչված նետն ունեցել է կոթին ամրացված 3 փետուրներ, իսկ նախնադարում դրանցով նետին տալիս էին «հորիզոնական ուղղությամբ սրընթաց ու ազատ ճախրելու ընդունակություն» (տե՛ս Նոր Բայազետից / Գավառից պեղված նյութերի նետաձիգի նկարը)⁶²:

Հայկի խորհրդանշանը նախ Հայկի աղիսի՝ հայկազունների, ապա և հայախոս մյուս ցեղերի կողմից համարվել է իրենց էթնիկական պատկանելությունը

55 Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, Եր., 1939, գիրք Ա, էջ 3,4,5:

56 Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 21-22: Հմմտ. մեր թագավորների կրած **Երուանդ** անունը, որը, փաստորեն, ամպրոպի աստծո բուն հայկական անունն է (տե՛ս **Պետրոսյան Ա.**, Ղասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 331-337):

57 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, ժթ.: Տե՛ս նաև՝ **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. III, Եր., 1964, էջ 35:

58 Այդ թվականին հանգել են՝ ելակետ ունենալով 428 թ. նավասարդի 1-ը (համընկնում էր օգոստոսի 11-ին), որը համարվել է Բելի դեմ Հայկի տարած հաղթանակի օրը: Ղրանից «Հայկալ շրջանով» երկու պարբերաշրջան ետ գնալով (1460+1460) և դրանից հանելով 428՝ ստացել են մ. թ. ա. 2492 թ. (տե՛ս **Ալիշան Ղ.**, Յուշկըր հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869, հատ. Ա, էջ 95: Տե՛ս նաև՝ **Բաղայան Հ.**, Օրացոյցի պատմություն, Եր., 1970, էջ 50-52 և ծան. 8: Տե՛ս նաև՝ **Սղայան Է.**, Ալևարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 26-29, 40-41):

59 Տե՛ս **Մովսիսի Խորենացու** պատմություն Հայոց, Ա, ժա:

60 Տե՛ս **Дьяконов И. М.**, Города-государства Шумера, «История древнего мира. Ранняя древность», М., 1989, էջ 70: Արքայուն աղեղնավոր-մետաձիգ զորամասեր ստեղծվել են մ. թ. ա. III հազարամյակի կեսից հետո (տե՛ս **Дьяконов И. М.**, Ранние деспотии в Месопотамии, էջ 74):


61 Տե՛ս **Матюшин Г. А.**, У колыбели истории, М., 1972, էջ 151:

62 Տե՛ս **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կոլտուրան, հատ. II, Եր., 1941, էջ 69-70:

վկայող կարևոր խորհրդանշան, ուստի տեղ է գտել ժայռապատկերներում, հագարամյակների թվագրումով կենցաղային իրերի և արվեստի գործերի վրա: Այն կանգնած տեսքով հայտնի է եղել նաև քրիստոնեական դարերում՝ մեծադիր պատկերով հայտնվելով նաև Անիի ավերակ շինություններից մեկի վրա (հիշենք Անիի պարսպի կեռախաչը՝ սվաստիկան) և ձեռագիր «Նշանագիրք իմաստնոց»-ներում: Այդ նույն խորհրդանշանը հորիզոնական ուղղությամբ գետեղելով իր կնիքի վրա՝ Սուպիլուլիումա I-ը, հավանաբար, հին հույների և հին հռոմեացիների նման նկատի է առել այն հանգամանքը, որ Օրիոնի հայտնվելը երկրակամարում համարվում էր ամպրոպային եղանակի և անձրևների նախանշան⁶³: Իսկ հայտնի է, որ արևային լույսի հետ անձրևն էր բերքատվության և երկրի բարգավաճման երաշխիքը:

3. Կնիքի նշանն ու դրա գուգահեռները

Հայկի/Օրիոնի խորհրդանշանից ներքև՝ Սուպիլուլիումա I-ի կնիքի ճիշտ կենտրոնում պատկերված նշանը նույնանուն է «աստված» նշանակող խեթական (լուվիական) մեհենագիր նշանին, որն աչքի տեսք ունի: Նախնադարյան մարդիկ, երկինքը էլիպսաձև՝ որպես աչք պատկերացնելով, նրան վերագրում էին ամենատեսություն և սրանից բխող ամենիմացություն⁶⁴: Այս հանգամանքից ելնելով՝ այս խորհրդանշանի հայկական գուգահեռներից բերենք «Նշանագիրք իմաստնոց»-ի՝ «Ավետարան» նշանակող տարբերակը:

Քրիստոնեական դարերում, անտարակույս, ամենիմացություն կարող էր համարվել Ավետարանի իմացությունը: Նույն նշանի  տարբերակի բացատրությունն է «մարգարե»⁶⁵: Սա ևս հասկանալի բացատրություն է: Մարգարեն ամենիմաց էր մարդկանց մեջ, ինչպիսին էր աստվածների մեջ երկնքի աստվածը: Այս նշանն ունի նաև «ամենակալ» բացատրությունը, որը, անշուշտ, նույնպես եղել է երկնքի աստծո մակդիրը⁶⁶: Թե ինչ ճանապարհով կարող էր այս խորհրդանշանը հայտնվել միջնադարյան «Նշանագիրք իմաստնոց»-ում, մնում է գաղտնիք: Բայց արդեն գաղտնիք չէ, որ այն իր ուղին սկսել էր Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնակչության միջավայրում: Սևանա լճից մոտ 5 կմ հարավ-արևմուտք գտնվող Գեղիովտի մ. թ. ա. VIII-VII դդ. սահմանագլխով թվագրվող ավերված քարանձավ-դամբարանից հայտնաբերված բրոնզե սափորի պահպանված մասի շրթնային հատվածում կա փորագիր, եր-

63 Տե՛ս Тахо-Годи А. А., Орион, «Мифы народов мира», էջ 262: Տե՛ս նաև՝ «Древнегреческо-русский словарь», Составил


И. Х. Дворецкий, т. II, М., 1958, էջ 188: Նույնի Латинско-русский словарь, М., 1976, էջ 712:

64 Տե՛ս Брагинская Н. В., Небо, МНМ, т. II, էջ 206-208:

65 Տե՛ս Աճառյան Հ., Հայոց գրերը. Յուդակ հայկական հին նշանագրերի, թիվ 107: Տե՛ս նաև՝ Արրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 233, 240:

66 Տե՛ս Արրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 231, 234:

կու մասից բաղկացած մեհենագրություն (Նկ. 4)⁶⁷: Ներքևի մասը ներկայացնում է վերև պարզած բացված մատներով երկու դաստակներ, իսկ դրանց վերևում խոսքի առարկա խորհրդանշանի տարբերակն է, բայց վերից վար արված ոչ թե մեկ, այլ երկու գծով: Դրանով այն նմանվում է «աստվածություն» նշանակող խեթական (լուվիական) մեհենագրին: Գեղիովտի քարանձավ-դամբարանը պեղած Ա. Փիլիպոսյանն ու Ռ. Մկրտչյանը ոչ միայն նկատել էին այս նմանությունը, այլև մատնացույց էին արել շատ ավելի վաղ ժամանակաշրջանով (մ. թ. ա. XVIII-XVI դդ.) թվագրվող՝ Միջին բրոնզի դարաշրջանի սևան-արցախյան մշակութային խմբին վերագրվող սև փայլեցրած կավանոթի նույնպիսի գարդանախշը⁶⁸: Նրանց կարծիքով՝ սրա «գալարադրոշմ ալիքանախշն ավարտվում է նույն եղանակով արված ձվածիր շրջագծով և վերջինիս միջնամասում արված վերից վար իջնող երկու գուգահեռ գծերով... Պատկերը, որը ըստ էության, նույնությամբ կրկնում է իրեն համաժամանակյա խեթական «աստվածե գաղափարագրի մանրամասները»⁶⁹:



Նկ. 4

Վեր պարզած ձեռքերի պատկերը ևս վկայում է, որ աչքի տեսք ունեցող խոսքի առարկա նշանը երկնքի խորհրդանշանն է: Ինչպես Է. Թեյլորն էր ժամանակին նկատել տալիս. «Հին արիացիների (իմա՝ հնդեվրոպացիների - Ս. Պ.) աստվածացված էակն ամբողջ երկրակամարն է՝ զգայաբար ընկալված օրյեկտ և աստված, որին աղերսում են վերև պարզած ձեռքերով և գովաբանական երգերով»⁷⁰: Վերը նշվեց, որ խոսքի առարկա նշանի մի տարբերակը «Նշանագիրք իմաստնոց»-ում նաև «ամենակալ» է նշանակում: Հենց ամենակալ երկնային աստծուն էին հնդեվրոպացիները դիմում «վեր պարզած ձեռքերով և գովաբանական երգերով»:

67 Տե՛ս Փիլիպոսյան Ա. Ա., Մկրտչյան Ռ. Ա., Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր դամբարանը, Եր., 2001, աղ. 30, նկ 7:

68 Տե՛ս նույն տեղում, էջ 157, աղ. 34, նկ. 3:

69 Նույն տեղում, էջ 32-ի ծան.:

70 Тэйлор Э., Первобытная культура, М., 1939, с. 416.

Նախապես «աչք» նշանակող, ապա երկինքը խորհրդանշող հասկացությունը միայն խեղճերենում չէ, որ ստացել էր «աստված» նշանակությունը: Հայերենում ևս տեղի էր ունեցել իմաստային նույն զարգացումը: Գրաբարի **դէտ** «դիտող, պահապան» արմատից ունեինք **դիտակ** «դեմք, աչք» բառը⁷¹, որոնց հիմքում հ.-ե. *dhī- «տեսնել, դիտել» արմատն է (և ոչ թե իրանական լեզուներից փոխառյալ *dēt-ը. հ.-ե. *dh- > հայ. դ): Հ.-ե. *dhī-ից են ծագում նաև ազգակից լեզուների հետևյալ բառերը՝ հին հնդկ. ndīdhēt «դիտում էր», dhīr «տեսնող, իմաստուն», հուն. δῖμα, հուն. դոր. ζῆμα (<*dhyā-m̥) «նշան», ալբան. diture «իմաստություն», գոթ. filudeisei «խորամանկություն և այլն»⁷²: Սրանց արմատակիցներից են նաև հայ. **դի-ք** «աստված, կուռք», հուն. θεός «աստված, փոյուզ. δεός «աստված» բառերը⁷³: Վերը նշվեց, որ, վաղ նախնադարում երկինքը պատկերացնելով որպես էլիպսաձև աչք, մարդիկ նրան վերագրում էին ամենատեսություն և դրանից բխող ամենիմացություն: Վերջինիս առումով ուշագրավ են մանավանդ վերևում բերված հին հնդկ. dhīr «տեսնող, իմաստուն» և ալբան. diture «իմաստություն բառերը, ինչպես նաև հույների Չևսի նույնիմաստ մակդիրը (Διός μητιετα)⁷⁴ և հին իրանցիների «Իմաստուն Ահուրա»-ն (Ahura-Mazdā): Իմաստային զարգացման վերջնակետն է հայերեն **դի-ք** «աստված» բառը, որը, **դէտ** բառի հետ ունեցած կապը պահպանելով հանդերձ, որևէ աստծո մակդիր-մականունը չէր, այլ ուղղակի «աստված» էր նշանակում այնպես, ինչպես քննարկման առարկա հայկական ու խեթական խորհրդանշանները:

Չենք կարծում, թե «աչք», «աստված», «երկինք» հասկացությունների առասպելաբանական համադրումները եղել են միայն աչքն ու երկինքը էլիպսաձև պատկերացնելու հետևանք: Մեր հեռավոր նախնիները, անշուշտ, նկատի են ամել այդ երևույթների ներքին, բայց և տեսանելի կապը: Դա եղել է «արցունք»/«ջուր» և «տեսողություն»/«լույս» առասպելաբանական համադրումը՝ երևակայականից տեղափոխված իրական դաշտ: Ի դեպ, ինչպես ականավոր հնդեվրոպաբան Ժ. Դյումենզիլն էր նկատում, «Հնդեվրոպական պաշտամունքը հղված չէր ինքնաբավ էակներին, այլ հենց բնության կամ սոցիալական ուժերին»⁷⁵, տվյալ դեպքում՝ բնության ամենասակտիվ հզոր ուժերը՝ լույսն ու ջուրը ծնող երկնքին: Հնդեվրոպական ծագմամբ հայերեն **ակն** բառը լույսի աղբյուր է համարվել ոչ միայն որպես տեսողության օրգան՝ **ակն** «աչք», այլև որպես երկնային երևույթ՝ **արեգ-ակն**, **փայլ-ակն**, **կայծ-ակն**, բայց նաև «**ջրի ակն(ակունք)**» է նշանակել: Այստեղ արդեն հասկանալի է դառնում քննարկվող նշանի մեջտեղում վերից վար դրված գծի կամ գույգ գծերի իմաստը: Դրանք բաժա-

71 Տե՛ս ՀԱԲ, հատ. I, էջ 661:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 662:

73 Տե՛ս նույն տեղում, հատ. I, էջ 672: Վաղ հնդեվրոպական լեզվի մայրը համարված «բորեալ» կոչված լեզուն հավանաբար *dh և *d հնչյունները չէր տարբերակում, ուստի հայերեն տիի բառի կողքին ունենք դէտ և դիք բառերը (հմմտ. «բորեալ» D-Y > վաղ հ.-ե. DY > հայ. տիի. Андреев Н. Д., Ранне-индоевропейский праязык, JL, 1986, с. 46, 86-87):

74 Տե՛ս «Древнегереческо-русский словарь», М., 1958, т. I, էջ 733, т. II, էջ 1094:

75 Dumézil G., Les Dieux des Indo-Européens, Paris, 1952, p. 334.

նարարներ են հակադրամիասնություն ըմբռնված երկնքի բաղադրիչների միջև (չէ՞ որ էլիպսը երկկենտրոն է): Շատ ժողովուրդների հավատալիքներում Աստված բացում է երկնային պատուհանը արևի և անձրևի համար⁷⁶:

Մեր նախնիները երկնքի աստծո որդիներն են համարել ամպրոպի (անձրև, ջուր) և արևի (լույս) աստվածություններին: Նրանց վիպական հետնորդ երկվորյակներն են Սանասարը՝ ամպրոպ, և Բաղդասարը՝ արև, Յուլակը՝ ամպրոպ, և Փառոխը՝ արև, Գիսանեն՝ ջուր, և Դեմետրը՝ արև, Երվանդը՝ ամպրոպ, և Երվազը՝ արև⁷⁷: Երկնքին բնորոշ այդ հակադրամիասնությունը դրսևորվում է միևնույն արմատի՝ «ջրային» և «լուսեղեն» իմաստներով կիրառության մեջ⁷⁸: **Մաղ** արմատից ունենք թե՛ լույսին և թե՛ անձրևին վերաբերող բառեր: Ահա դրանցից մի քանիսը. **մաղմղել** (< մաղ-մաղ-ել) «մաղելու պես թափվել, ցուլալ (լույսի մասին)», **մաղկտալ** (< մաղ-կատ-ալ) «արշալույսին լույսը ճանաչել», **մաղկտավոր** «ճանաչափայլ, փայլփող», **մաղել** «բարակ անձրև գալ», **մաղմաղ** «մաղիկ-մաղիկ բարակ, հանդարտ (մաղմաղ անձրև է գալիս)», **մաղմղել** «բարակ անձրև գալ, մաղմաղ անձրևել»⁷⁹:

Եթե հիշենք, որ նախամարդու պատկերացրած առաջին կրակը և առաջին ջուրը երկնային ծագում ունեին, իրականում էլ կայծակի և անձրևի հետևանքներն են, ապա պարզ կդառնա, թե ինչու էին հին հույները հավատում, որ «բոլոր գետերը Չևսից են»⁸⁰, իսկ հին հնդիկների կարծիքով՝ իրենց սրբազան գետի՝ Գանգեսի ակունքները երկնքում էին⁸¹: Կրակի և ջրի վրա Հայկ աստծո ունեցած իշխանության մասին պատկերացման՝ ուշ ժամանակների մի հուշ՝ որպես ավանդագրույց, գրի է առել Գարեգին Սրվանձոյանցը: Թեև դրանում Հայկի կերպարը երկփեղկված է և վերածված երկնային աստծո և հայոց թագավորի, բայց կասկած լինել չի կարող, որ դա քրիստոնյա դարերի մտածելակերպի ազդեցության հետևանք է:

Ահա ավանդագրույցը. «Կռապաշտ թագավոր է եղել Բելը և մեծ գործով եկեր Հայոց թագավորի ու երկրի վրա կռիվ. Հայոց թագավորը Աստծու ձեռքով սպաներ է գԲել և հաներ Նեմրութա գլուխ. այն տեղը փորեր, թոնիր շիներ, մեջը կախեր վառեր է: Աստուծոյ հրամանքով այն կրակը ջուր է կտրեր, գմոխիրն հողի տակ իջուցեր, որ չեղնի քամին անոր փոշին տանի»⁸²: Իսկ թե «թոնիր»

76 Стів Топоров В. Н., Окно, МНМ, 1988, т. II, էջ 250:

77 Տես **Մովսիս Խորենացու** պատմություն Հայոց, Բ, լէ, Բ, լթ, Բ, խ, Բ, խը: Տես նաև՝ **Պետրոսյան Ա.**, Դատերը և եռադատության դրսևորումները հին Հայաստանում, էջ 64-66, 103-106, 113-117:

78 Հմմտ. **շող** «արևի ճառագայթ, նշույթ, ցուլք», «լուսավոր, փայլուն», **շողալ** «վայել, ցուլալ» (ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 528-529) և **շող** «խոնավություն, թացություն», որից **շողիք** և այլն (ՀԱԲ, հատ. III, էջ 529):


79 ՀԲԲ, հատ. III, Եր., 1944, էջ 243-245:

80 Брагинская Н. В., указ. соч., с. 207.


81 Տես **Гринцер П. А.**, Ганга, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», М., 2003, էջ 140:

82 **Սրվանձոյանց Ա.**, մշվ. աշխ., հատ. I, էջ 50: Հայկի հրեղեն էության վկայություններն են նրա **Արեթածին** և **Արեթայն** մակդիրները (տես **Արեթու**, գլ. Ա, էջ 2, 5): Հմմտ. բոցածին-եղեգնածին Վահագն աստծո կերպարը: Մար Աբասի հետևությանը մեր պատմիչները Հայկի այս մակդիրները կապել են Նոյի երրորդ որդու անվան հետ (եբրայ. Yāfet, հուն. Ιάφεθ), բայց, մեր կարծիքով, սրանք հայերեն **արեթ** բառով ստեղծված բարդ և ածանցյալ ձևեր են (տես **Պետրոսյան Ա.**, Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 10-11): **Արեթ** նշանակում է «լուցկիք նիւթ վառելի ի կտաւէ կամ ի սնկոյ» և «լեռ-

կոչվածն իր ջուր դարձած կրակով ինչ է, պարզվում է բանահավաք ակնաստե- սի ներկայացրած հետևյալ նկարագրությունից. «Գրգուռա թիկնաց ի վեր կը բարձրանա Նեմրույթ կամ Նեբրովթ լեռը, որո գլուխը նման է բոլորակ սեղանի մը. մեջտեղը հրաբուխի մարմնուրթը և անոր շուրջը պսակածն շարված աղբ- յուրներ բարեհամ...», որոց ջրերը ժողվելով մեկտեղ ավազան մը կը կազմեն Նեբրովթա գլխու սկավառակին մեջ»⁸³: Անշուշտ, խոսքը նախապատմական ժամանակներում տեղի ունեցած հրաբխային ժայթքումի հետևանքների մա- սին է, որոնք մեր հեռավոր նախնիներն ավելի ուշ վերագրել են իրենց գերա- գույն աստված Հայկին՝ որպես առհավատյա Բելի (Նեբրովթ) դեմ նրա տարած հաղթանակի (հմմտ. Չևս-Տյուփոն հակամարտության արդյունքները): Մեր նախնիների առասպելաբանական մտածելակերպով՝ թոնիրը երկրի վրա հա- մարժեք էր արևին երկնքում: Ըստ այսմ՝ մինչև XX դարի սկզբները եկեղեցի չունեցող գյուղերում մանուկների մկրտությունը կատարում էին թոնրի շրթին:

Սուալիլուլիումա I-ի կնիքի՝ աչքի տեսքով  խորհրդանշանը որպես հակադրամիասնական երկնքի խորհրդանշան էր տեղ գտել կնիքի ճիշտ կենտրո- նում: Դրանով խեթական արքան շեշտել է իր առնչությունը երկնքի և երկնածին այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են լույս-արևայինը և անձրև-ամպրոպա- յինը: «Թագավորի և գահի երկխոսությունը» խեթերեն տեքստում թագավորն ասում է. «Ինձ՝ թագավորիս, երկիրը և իմ տիրապետությունը հանձնել են աստ- վածները՝ արևի աստվածը և ամպրոպի աստվածը: Եվ ես՝ թագավորս, երկիրը և իմ տիրապետությունն են պաշտպանում»⁸⁴: Պաշտպանության երկու միջոց կար՝ զենքը և բերքատվության ու բարգավաճման երաշխավորումը⁸⁵: Թագավո- րը պետք է կարողանար դրանք իրագործել երկնքի հայեցողությամբ՝ արևի և ամպրոպի աստվածների անմիջական օգնությամբ:

Սուալիլուլիումա I-ի կնիքի՝ աչքի տեսքով խորհրդանշանի քննությունը ցույց տվեց, որ այն նույնը լինելով խեթական (լուվիական) մեհենագրության՝ «աստ- ված» նշանակող նշանի հետ, ավելի վաղ ունեցել է «երկինք» իմաստը՝ պատկե- րելով էլիպսաձև, երկկենտրոն աչք-երկինքն իր երկհակադրամիասնական՝ լույս- արևային և անձրև-ամպրոպային բնույթով: Երկնքի խորհրդանշանի այդպիսի բնույթը համահունչ է նաև դրանից վերև պատկերված արևային և ամպրոպային բնույթի խորհրդանշաններին, որոնց հետ այն գաղտնագերծում է խեթական թա- գավորի **Սուալիլուլիումա** գահավանդ «արև-ամպրոպային» իմաստը:

Հայկական  խորհրդանշանը Հայկին՝ որպես գերագույն աստծո, կարող էր առնչվել նաև այն պատճառով, որ «երկինք» տիեզերական հասկացությունը

նային բույս, որից արեթ են պատրաստում» («Նոր բառգիրք հայկագետն լեզուի», հատ. I, էջ 1: ՀԱԲ, հատ. I, էջ 74: ՀԲԲ, հատ. I, էջ 1):

83 Սրվանձույան Գ., նշվ. աշխ., հատ. I, էջ 34:

84 «Keilschrifturkunden aus Boghazköi», XXIX, 1, I, 17-19: Տե՛ս նաև Ардзинба В. Г., Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, էջ 33:

85 Տե՛ս Ардзинба В. Г., նշվ. աշխ., էջ 100:

համարվում է «Ժամանակ»-ի իմաստաբանական երկվորյակը⁸⁶: Ըստ այդմ՝ Կ. Մելիք-Օհանջանյանը հարցադրում է. «...հնարավոր չէ՞, արդյոք, այդ մեր առասպելաբանական նախահորը նույնացնել կամ զուգադրել անսահման անվախճան (իրանական - Ս.Պ.) Չրվանին, երկնքի և ժամանակի աստվածությանը, հունական Քրոնոսին և Ուրանոսին»⁸⁷: Կարծում ենք՝ զուգադրել կարելի է, բայց նույնացնել՝ ոչ: Հայկը՝ որպես գերագույն աստված, կարող էր ունենալ ոչ միայն աստվածացված երկնքին, այլև աստվածացված ժամանակին վերագրվող հատկություններ: Պատահական չէ, որ հին հայագետները Հայկին են վերագրել նաև երկնականարի անվախճան պտույտն ապահովողի և հավերժական ժամանակն անձնավորողի դերը, որովհետև համարվում էր, որ նրա զավակների ու թոռների անուններով են կոչվել հայոց հին տոմարի ամսանուններն ու ժամանունները, իսկ «Հայկայ շրջան» էր կոչվում 1460-ամյա Սոթիսի շրջանը: Ըստ Մ. Թադևոսյանցի՝ Հայկը համարվել է ժամանակն անձնավորողն ու նրա ընթացքը կարգավորողը⁸⁸, իսկ, ըստ Ղ. Ալիշանի, նա է եղել առաջին տոմարադիրը, ժամանակի և տարվա չափն ու շրջանը որոշողը⁸⁹:

Նոր հայկագյան բառարանում Հայկի/Օրիոն համաստեղությունն այսպես է նկարագրված. «Աստեղատուն յերկինս՝ շքեղ եւ բազմապայծառ աստեղօք երեւելի, մերձ առ Բազմաստեղս, **առընթեր ունելով կամ առ ոտս եւ գծուն**»⁹⁰: Հայտնի է, որ Հայկի համաստեղության գլխավորությամբ մյուս երկուսը ևս ժամադիտակի դեր են կատարել: Մեր դարաշրջանի Ծուն/Շնիկ (Սիրիոս) աստղը աշնանային-ձմեռային երկնքի աստղ է, բայց մ. թ. ա. 2800-2600 թթ. այն ամառային երկնքի և լուսաբացն ավետող աստղ էր: Է. Պարսամյանի դիտարկումով՝ Մեծամորի բնակիչները «կարող էին լուսատուի պարբերական երևալը օգտագործել ժամանակն հաշվելու համար»⁹¹: Քանի որ Բազումքի հետ զիշերվա ժամերը որոշողը Հայկի համաստեղությունն էր, ուստի կարծում ենք, որ հենց դա էր Անանիա Շիրակացուն **Ժամադիտակ** անունով հայտնի համաստեղությունը: Այդ համաստեղության վերաբերյալ մեր աստղագետը գրում է. «Իսկ զժամադիտակն ասեն թե մատակարար է ի միջի նոցա հիմն լեալ ամենայն աշխար-

վել համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020

86 Տե՛ս Март Н. Я., Избранные работы, т. II, Л., 1934, էջ 132, 148: Մելիք-Օհանջանյան Կ., նշվ. աշխ., էջ 311:
 87 Մելիք-Օհանջանյան Կ., նշվ. աշխ., էջ 316-317: Հայկ աստծո կերպարն ընդհանրություններ ուներ նաև Առուր-Սագդայի հետ, որն իր պաշտամունքի վաղ փուլում անձնավորում էր նաև աստղային երկինքը (տե՛ս «Ավետատ», Յանա, XXX, 5 և LI, 30, Յաշտ, XIII, 3: Јелеков Л. А., Ахырамазда, МНМ, т. I, էջ 141): Նույնը տեսնում ենք նաև եգիպտական Սախ/Օրիոն կոչված աստծո դեպքում, որին նույնիսկ համարում էին աստղերի թագավորը (տե՛ս Рубинштейн Р. И., Сах, МНМ, т. II, էջ 418):
 88 Տե՛ս Թադևոսյանց Մ., Ղիցաբանութիւն... Կալկաթա, 1830, էջ 9:
 89 Տե՛ս Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 67:
 90 «Նոր Բազմորք հայկագեան լեգուի», հատ. II, էջ 31:
 91 Պարսամյան Է., ժայռակերտ կառուցվածքներ և ժայռագրեր, «Մեծամոր», Եր., 1973, էջ 148: Շնիկ (Շուն) աստղի՝ Հայկի / Օրիոն համաստեղության հետ դիտարկման փաստից կարելի է կրահել, որ. 1. Նրա «Արամագդի աստղ» անվանումը հետին է փոխարինել է «Հայկի աստղ» անվանը, 2. Շնիկը նույնպիսի կապի մեջ է եղել Հայկի հետ, ինչ և Սիրիոսը՝ Օրիոնի (հմնտ. Շնիկ / Սիրիոս / յատին. Canicula «շնիկ»): Հոմերոսի «Իլիական»-ում (XXII, 29) Սիրիոսը կոչվում է «Օրիոնի Շուն» (տե՛ս Հոմերոս, Իլիական, Հին հունարեն բնագրից թարգմանեց՝ Համազասպ Համբարձումյան, Եր., 1955, էջ 408):

հի»⁹²: Թարգմանված է այսպես. «Իսկ Ժամադիտակի մասին, ասում են, թե նա (աստղերի) մեջ կարգ սահմանողն է՝ հանդիսանալով աշխարհի հիմքը»⁹³:

Թռչնաթև արևի, Օրիոն համաստեղության և այքի տեսքով երկնքի խորհրդանշանների առկայությունը խեթական թագավոր Մուպիլուլիումա I-ի կնիքին և Հայկի պաշտամունքին առնչվող նյութերում պատահական գուգադիպություն չէ: Ըստ ամենայնի, գործ ունենք հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից եկած ընդհանուր ժառանգության հետ: Հայկական նյութի դեպքում պետք է նկատի առնել Հայկի՝ որպես գերագույն աստծո պաշտամունքին բնորոշ, դեռևս ժայռապատկերներում առկա խորհրդանշանները, իսկ Մուպիլուլիումա I-ի կնիքի դեպքում՝ խեթական արքաներին հնուց հայտնի թռչնաթև արևի և այքի տեսքով երկնքի խորհրդանշաններին Օրիոն համաստեղության խորհրդանշանի հավելումը: Մրանց գուգահեռ ուսումնասիրության անհրաժեշտությունը թելադրված էր բերված ու քննարկված խեթական ու հայկական ողջ նյութի տրամաբանությամբ:

Այսպիսով, Մուպիլուլիումա I-ի կնիքին Հայկի պաշտամունքին առնչվող թռչնաթև արևի, Օրիոն համաստեղության և այքի տեսքով խորհրդանշանների առկայությունը պատահական գուգադիպություն չէ: Ըստ երևույթին, «արևելյան ծովափին» (Վանա լճի հյուսիսարևելյան ափերն ընդգրկած Արամալի-Արմարիի երկիր) բնակված ցեղի մի հատվածը Փոքր Ասիայում հաստատվելուց հետո խեթերին ժառանգություն էր թողել ինչպես «ձկները գլխին», «ջրի արև աստծո» պաշտամունքը, այնպես էլ հայ ցեղի գերագույն աստված Հայկի գրեթե համապարփակ պաշտամունքի ինչ-ինչ տարրեր՝ նրա խորհրդանշաններով հանդերձ: Այսպիսի աշխատանքային վարկածի հիմնավոր լինելու մասին է վկայում բերված ու քննարկված հայկական ու խեթական ողջ նյութը:

Սարգիս Գ. Պետրոսյան - 2 մենագրության և ավելի քան 130 տպագրված գիտական հոդվածների հեղինակ է: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրների հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

Էլեկտրոնային հասցե՝ Vah1996@mail.ru

92 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն եւ տոմար, էջ 22:

93 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Արրահանյանի և Գ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 81:

THE COMMONALITIES OF SYMBOLS ON THE STAMP OF SUPPILULIUMA I

And the Armenian celestial symbols

Sargis G. Petrosyan

Doctor of Historical Sciences

Key words - Suppiluliuma I, stamp, Sun god, Thunder god, Sky god, Hayk, Orion, Sirius, Canicula, symbol, constellation, millennium.

The winged Sun – the symbol of the Hittite Sun god, was present on the stamps of several Hittite kings. The prototype of this symbol is found on the rock-carvings in Armenia, and in Urartu this symbol was used both as that of the Sun god and sometimes as the symbol of Haldi. One of the gods of the Hittite pantheon was called “rising from the sea”, “Sun god of Water” and was described “with fish on his head”. The city of Tushpa (Van), on the eastern shore of Lake Van, was a well-known centre of the Sun worship. The River Berkri, which is rich in fish, flows into Lake Van in its north-east. Here were the fishery trades of the ancient Armenian kings. It is in this region where the Urartian king Menua erected a stele which according to its script, was dedicated to the Sun god.

The stamp of Suppiluliuma I differs from those of other Hittite kings with the contour image of the constellation of Orion printed on it. It is also found in the Armenian cave drawings, on the ceramic products of the Bronze Age, in the Urartian hieroglyphic scripts, even in the Medieval Armenian manuscripts (in the list of “The Letters of the Sages”). As a written sign, in ancient times it was considered the symbolic sign of Hayk, the main god of the ancestors of Armenians. It is known that ancient Armenians called the constellation of Orion-Hayk(-n).

On the stamp of Suppiluliuma I there was also a written sign which in the Hittite hieroglyphic writing meant “deity”. In Armenia, the same signs are found on one Bronze Age ceramic vessel (18th-16th cc. B.C.) and on one bronze jug (8th-6th cc. B.C.) from Lake Sevan basin. In the Armenian Highland this sign was attributed to the Sky god (most probably to the same Hayk). It was a picture of an ellipsoidal eye, i.e. the same image which was attributed to the sky by our ancestors. In the mythological images of the Indo-Europeans/Indo-European peoples, the concepts “eye” and “sky” are comparable in the same way as the conceptions “eye’s light” and “light” or “tear” and “rain”.

The appearance of symbols like the winged disk of Sun, the constellation Orion and the Sky in the form of eyes on the stamp of Suppiluliuma I and on materials related to the cult of Hayk – the mythical progenitor of Armenians, is not the result of an accidental coincidence. Most likely, we are dealing with the Indo-European heritage.

In case of Armenian material, one must keep in mind that the archetypes of these symbols are already present in the oldest rock paintings of the Armenian mountains. In case of the stamp of Suppiluliuma I, it should be borne in mind, that the symbol of the constellation Orion has been added to the symbols of the wingy solar disk and the celestial eye known to the Hittites long ago.

The need for a parallel research of these symbols in the paper is dictated by the logic of the whole Hittite and Armenian adduced and discussed material.

Резюме

ОБЩНОСТЬ СИМВОЛОВ ПЕЧАТИ ХЕТТСКОГО ЦАРЯ СУППИЛУЛИУМЫ I

И армянских небесных символов

Саргис Г. Петросян (Гюмри)

Доктор ист. наук

Ключевые слова - Суппилулиума, печать, бог солнца, бог грома, бог неба, Айк, Орион, Сириус, Каникула, символ, созвездие, тысячелетие.

Крылатый солнечный диск, символ хеттского бога Солнца, наличествовал на печатях нескольких хеттских царей. Прототип этого символа налично на наскальных рисунках Армении, а в Урарту этот символ применялся как символ бога Солнца (^DUTU, ^DŠiuini), а иногда как символ бога Халди. Одного из богов хеттского пантеона называли «встающим из моря», «богом Солнца воды» и описывали с «рыбами на голове». Известно, что город Тушпа (Ван) у восточного побережья озера Ван был общеизвестным центром культа солнца. С северо-востока в озеро впадает богатая рыбой река Беркри. Здесь складывались рыбные промыслы древних царей Армении. Именно в этом районе царь Урарту Менуа установил стелу, которая, как гласит надпись, была посвящена богу Солнца.

Печать Суппилиумы I отличается от известных печатей других хеттских царей тем, что на ней наличествует контурное изображение созвездия Орион. Оно наличествует также на наскальных рисунках Армении, на керамических изделиях бронзового века, в иероглифических надписях Урарту, даже в средневековых армянских рукописях (в списке «Письмен мудрецов»). Как письменный знак, в древности его считали символическим знаком Айка (Հւյլ) – главного бога предков армян. Известно, что созвездие Орион у древних армян носило имя Айк(-н), Հւյլ(-ն)।

На печати Суппилиумы I наличествовал также письменный знак, который в хеттском (лувийском) иероглифическом письме означает «божество». В Армении такие же знаки встречаются на керамическом сосуде бронзового века (XVIII-XVI вв. до н. э.) и на бронзовом кувшине из бассейна озера Севан (VIII-VI вв. до н. э.). На Армянском нагорье этот знак относился к богу неба (вероятнее всего, к тому же Айку). Он представлял собой изображение эллипсоидного глаза, т. е. был таким же, каким наши предки представляли небо. В мифологических представлениях индоевропейских народов понятия «глаз» и «небо» сопоставимы таким же образом, как и такие понятия, как «зрение» и «свет», «слеза» и «дождь».

Появление символов крылатого солнечного диска, созвездия Орион и неба в виде глаза на печати Суппилиумы I и на материалах, связанных с культом Айка мифического предка армян, не являются случайным совпадением. Скорее всего, мы имеем дело с индоевропейским наследием. В случае армянского материала надо иметь в виду, что архетипы этих символов наличествуют уже на древнейших наскальных рисунках армянских гор. В случае же печати Суппилиумы I надо иметь в виду, что к известным хеттам с древнейших времен символам крылатого солнечного диска и небесного глаза здесь добавлен символ созвездия Орион.

Необходимость параллельного изучения этих символов в статье продиктована логикой всего приведенного и обсужденного хеттского и армянского фактического материала.

REFERENCES

1. «Bargirk' hayots'», K'nnakan bnagirë, arajabanë yev tsanot'agrut'yunnerë` **H. Amalyani**, Yer., 1975 (**In Armenian**).
2. «Drevnegrechesko-russkij slovar'», t. II, Sostavil **I. X. Dvoreckij**, M., 1958 (**In Russian**).
3. «Hay zhoghovrdakan hek'iat'ner», hat. VIII, Yer., 1977 (**In Armenian**).
4. «Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia: Hnaguyn zhamanaknerits' minch'ev 9-rd dari keserë», hat. 1, Yer., 1981 (**In Armenian**).

5. «Hay zhoghovrdi patmut'yun», hat. I, Yer., HSSH GA hratarakut'yun, 1971 **(In Armenian)**.
6. «Nor bargirk' haykazean lezui», Yer., 1979, hat. I, 1981, hat. II, **(In Armenian)**.
7. «Xrestomatija po istorii drevnego Vostoka», pod redakcijej **M. A. Korostovceva, I. S. Kacnel'sona, V. I. Kuzish'ina**, t. I, M., 1980 **(In Russian)**.
8. **Abeghyan M.**, Yerker, hat. I, Yer., 1966 **(In Armenian)**.
9. **Abrahamyan A.**, Hayots' gir yev grch'ut'yun, Yer., 1973 **(In Armenian)**.
10. **Acharyan H.**, Hayeren armatakan bararan, hat. I-IV, Yer., 1971-1979 **(In Armenian)**.
11. **Acharyan H.**, Hayots' andznanunneri bararan, hat. III, Yer., 1946 **(In Armenian)**.
12. **Acharyan H.**, Hayots' grerē: Ts'uts'ak haykakan hin nshanagreri, Yer., 1984 **(In Armenian)**.
13. **Adonts' N.**, Hayastani patmut'yun: Akunk'nerē, 10-6-rd dd. m. t'. a., Yer., 1972 **(In Armenian)**.
14. **Aghayan Ē.**, Aknarkner hayots' tomarneri patmut'yan, Yer., 1986 **(In Armenian)**.
15. **Alishan Gh.**, Hayots' hin havatk'ē kam het'anosakan kronē, Yer., 2002 **(In Armenian)**.
16. **Alishan Gh.**, Yushikk' hayreneats' hayots', Venetik, 1869 **(In Armenian)**.
17. **Anania Shirakats'i**, Matenagrut'yun, T'argmanut'yunē, arajabanē yev tsanot'agrut'yunnerē` **A. Abrahamyani** yev **G. Petrosyani**, Yer., 1979 **(In Armenian)**.
18. **Anania Shirakats'i**, Tiezeragitut'iwn yew tomar, Yer., 1940 **(In Armenian)**.
19. **Andrejev N. D.**, Rannje-indojevropejskij prajazyk, L., 1986 **(In Russian)**.
20. **Ardzinba V. G.**, Ritualy i mify drevnej Anatolii, M., 1982 **(In Russian)**.
21. **Badalyan H.**, Orats'uyts'i patmut'yun, Yer., 1970 **(In Armenian)**.
22. **Braginskaja N. V.**, Nebo, «Mify narodov mira», M., 1988, t. II **(In Russian)**.
23. **D'jakonov I. M.**, Rannije despotii v Mesopotamii, «Istorija drevnego mira. Rannjaja drevnost'», M., 1989, t. I **(In Russian)**.
24. **D'jakonov I. M.**, Assiro-vavilonskije istochniki ob istorii Urartu, «Vestnik drevnej istorii», 1951, N 2-4 **(In Russian)**.
25. **D'jakonov I. M.**, Goroda-gosudarstva Shumera, «Istorija drevnego mira. Rannjaja drevnost'», M., 1989, t. I **(In Russian)**.
26. **D'jakonov I. M.**, Predistorija armjanskogo naroda: Armjanskoe nagor'je s 1500-500 gg. do n. e., Jer., 1968 **(In Russian)**.
27. **Dvoreckij I. X.**, Latinsko-russkij slovar', M., 1976 **(In Russian)**.
28. **Dzhaukjan G.**, Vzaimootnosheniye indojevropejskix, xurritsko-urartskix i kavkazskix jazykov, Jer., 1967 **(In Russian)**.
29. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.**, Indojevropejskij jazyk i indojevropejcy, t. I-II, Tbilisi, **(In Russian)**.
30. **Gerni O. R.**, Xetty, M., 1987 **(In Russian)**.
31. **Ghanalanyan A.**, Aṙatsani, Yer., 1960 **(In Armenian)**.
32. **Grincer P. A.**, Ganga, «Mifologija. Zolotoj fond. Enciklopedija», M., 2003 **(In Russian)**.
33. **Harut'yunyan S.**, Hay zhoghovrdakan hanelukner, Yer., 1965 **(In Armenian)**.
34. **Homeros**, Iliakan, Yer., 1955 **(In Armenian)**.
35. **Jahukyan G.**, Hayerenē yev hndevropakan hin lezunerē, Yer., 1970 **(In Armenian)**.
36. **Jahukyan G.**, Hayots' lezvi patmut'yun. nakhagrayin zhamanakashrjan, Yer., 1987 **(In Armenian)**.
37. **Karaxmedova A. A.**, Xurritskije pečati iz Mingechaura, «Kul'turnyje svjazi narodov Srednej Azii i Kavkaza: Drevnost' i Srednevekov'je», M., 1990 **(In Russian)**.

38. **Khanzadyan Ē.**, Nyut'akan artadrut'yan mnats'ordner, shertagrakan ditoghut'yunner yev t'vagrut'yan hart's'er, «Metsamor», Yer., 1973 **(In Armenian)**.
39. **K'osyan A.**, M. t' a. XII dari merdzavorarevelyan chgnazhamē yev Haykakan lērnasharhē, Yer., 1999 **(In Armenian)**.
40. **Lelekov L. A.**, Axuramazda, «Mify narodov mira», M., 1987, t. I **(In Russian)**.
41. **Malkhasyants' S.**, Hayeren bats'atrankan bararan, hat. I-IV, Yer., 1944-45 **(In Armenian)**.
42. **Marr N. Ja.**, Izbrannyje raboty, L., 1934 **(In Russian)**.
43. **Marr S. M.**, Moxarram, «Tradicionnaja kul'tura narodov Perednej i Srednej Azii», L., 1970 **(In Russian)**.
44. **Martirosyan H.**, Hayastani nakhnadaryan nshanagrere yev nrants' urarta-haykakan krknaknerē, Yer., 1973 **(In Armenian)**.
45. **Martirosyan H., Israyelyan H.**, Geghama lerner i zhayrapatkernerē, «Hayastani hnagitakan hushardzannerē», 6, Yer., 1971 **(In Armenian)**.
46. **Matjushin G. A.**, U kolybeli istorii, M., 1972 **(In Russian)**.
47. **Melikishvili G. A.**, Urartskije klinoobraznyje nadpisi, M., 1960 **(In Russian)**.
48. **Melik'-Ohanjanyan K.**, Mit'ra-Mihri arbanjaknery u gortsakalnerē, «Grakan-banasirakan hetakhuzumner», girk' I, Yer., 1946 **(In Armenian)**.
49. **Mkrтч'yan K.**, Zhayrakert karuts'vatsk'ner yev zhayragrer: Mets bluri karuts'vatsk'nerē, «Metsamor», Yer., 1973 **(In Armenian)**.
50. **Movsisi Khorenatzwoy** patmut'iwn Hayots', Yer., 1981 **(In Armenian)**.
51. **Movsisyan A.**, Haykakan mehenagrut'yun, Yer., 2003 **(In Armenian)**.
52. **Parsamyān Ē.**, Zhayrakert karuts'vatsk'ner yev zhayragrer: P'ok'r bluri hart'akneri astghagitakan nshanakut'yunē, «Metsamor», Yer., 1973 **(In Armenian)**.
53. P'awstosi Biwandats'woy patmut'iwn Hayots', Yer., 1987 **(In Armenian)**.
54. **Petrosyan S.**, Daserē yev yeradasut'yan drsevorumnerē hin Hayastanum, Yer., 2006 **(In Armenian)**.
55. **Petrosyan S.**, Hayots' mehenagrut'yan akunk'nerum, Gyumri, 2008 **(In Armenian)**.
56. **Petrosyan S.**, Patmut'yunn u araspelē Sinam t'agavori vipakan kerparum, «Vēm» hamahaykakan handes, 2016, N 1 **(In Armenian)**.
57. **Petrosyan S., Petrosyan Ts.**, Hnaguyn Tsop'k'i dits'akan glkhavor yeryakē, «HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. Gitakan ashkhatut'yunner», IV, Gyumri, 2001 **(In Armenian)**.
58. **P'iliposyan A. A., Mkrтч'yan R. A.**, Geghhovti vantospyan (urartakan) k'arayr dambaranē, Yer., 2001 **(In Armenian)**.
59. **Rubinshtejn R. I.**, Sax, «Mify narodov mira», M., 1988, t. II **(In Russian)**.
60. **Samuelyan Kh.**, Hin Hayastani kulturān, hat. II, Yer., 1941 **(In Armenian)**.
61. **Sebēosi** yepiskoposi patmut'iwn, Yer., 1939 **(In Armenian)**.
62. **Srvandztyants' G.**, Yerker, hat. I, Yer., 1978 **(In Armenian)**.
63. **T'aghiadeants' M.**, Dits'abanut'iwn, Kalkat'a, 1830 **(In Armenian)**.
64. **Taxo-Godi A. A.**, Orion, «Mify narodov mira», M., 1988, t. II **(In Russian)**.
65. **Tejlor E.**, Pervobytnaja kul'tura, M., 1939 **(In Russian)**.
66. **Toporov V. N.**, Okno, «Mify narodov mira», M., 1988, t. II **(In Russian)**.
67. **Yesayan S.**, Hayastani hnagitut'yun, Yer., 1992 **(In Armenian)**.